# ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԽՄԲԱԿԻ

# ԾՐԱԳԻՐ





Անվան

Հայաստ. Լենին. Կոմ. Յերիտ. Միութ.

2802-10

355(07)
Հ-24

# ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԽՄԲԱԿՆԵՐԻ

## ԾՐԱԳԻՐ

(4-ամսյա)

---

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀԼԿՅՄ Յերկոմ և Յերգավ. Պաշը-Ավիոքիմի
ՅԵՐԵՎԱՆ—1928

40745
01.06.2013

Գրառեպ. № 626. Գ. № 408 Տիրաժ 1000.

Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում

## ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ռազմական գիտելիքների խմբակների անդամների ռազմական պատրաստականությունը նպատակ ունի՝ առաջին՝ տալ խմբակայիններին գաղափար մեր յերկրի պաշտպանության աշխատանքների մասին, վորպեսզի նրանք կարողանան իրենց տընտեսական ստեղծագործող աշխատանքը կապել ռազմական հարցերին, յերկրորդ՝ տալ նրանց ռազմական տարրական պատրաստականություն, առանձին մարտիկի գործողության սահմաններում—բոլոր մարտական պարագաներում և Կարմիր բանակի սպառազինման բոլոր տեխնիքական միջոցների համագործակցության պայմաններում:

**Յերկրորդ.**—Ծանոթացնել նրանց հետևակի մարտական կոլեկտիվ միջոցների գործողության, ինչպես նաև հրաձգի անհատական զենքերի հատկության հետ:

**Առաջին խնդիրը**.— Կատարվում է՝ զըրույցների, դասախոսությունների միջոցով —նպատակ ունենալով 1. արտահայտել մեր յերկրի պաշտպանության կազմակերպումը՝ նրա կենսական կենտրոնների պահպանման մտքով. 2. ծանոթացնել մեր ռազմական տեխնիքական նվաճումներին—նույնպես և մեր հարևան յերկիրների—հաջողությունների հետ այդ ասպարիզում։

**Յերկրորդ խնդիրը**.— Կատարվում է՝ խըմբակի անդամներին տակտիկայի միջին փոփոխությունների նույնպես և հետևակի փոքր միավորների գործողությունների հետ ծանոթացնելով։

**Յերրորդ խնդիրը**.— Կատարվում է՝ ցույց տալով հետևակի մարտական կոլեկտիվ միջոցների հատկությունը և գործնականորեն անցնելով. հրացանի և նագանի հրաձգությունը։ Հետևակի մանր միավորների գործողությունների հետ ծանոթացում պիտի տեղի ունենա հրաձգային դասակի գործողության շրջանակներում, վորովհետև



նա հանդիսանում է հետևակի առանձին տակտիկական միավորը, վորը կարող է գործել ինքնուրույն և նույնիսկ լուծել փոքըր մարտական խնդիրներ, բացի այդ, դասակի գործողության ֆոնի վրա հեշտ է ցույց տալ հետևակի բոլոր մարտական միջոցների համագործակցությունը։

Ուղարկելիք 4 ամսյա ծրագիրը, կիրառելու համար առաջին հերթին կարիք է զգացվելու ռազմագետ խմբակավարների, վորի համար.

1. Տեղական ՈՍՈ-Ավիաքիմի կազմակերպությունների միջոցով. այդ աշխատանքներին հրավիրել պահեստում գտնվող հրամ. կազմը։ Վերջիններից խմբակավարներ ընտրելիս ի նկատի ունենալ ա), վոր նա ունենա առնվազն դասակի հրամանատարի պատրաստականություն, բ) ցանկալի՛ է, վոր գործի հրավիրվեն վերջին յերկու տարվա ընթացքում զորացրման յենթարկված հրամ. կազմը։

2. Յերևան, Լենինական, Ղարաքիլիսա,

Դիլիջան, Գորիս համաձայնության գալով տեղերում չեղած ռազմական մարմինների հետ, այդ գործի համար, պիտի աշխատեն օգտագործել զինվորական ծառայության մեջ գտնվող հրամ. կազմը։

3. Ցանկալի է որ ծրագրի այս կամ այն բաժնի առթիվ հրավիրվեն խմբակավարների համար հրահանգչական խորհրդակցություններ՝ հանձնարարելով ավելի պատրաստված զինվորականին համապատասխան զեկուցում։

Այս խորհրդակցություններն ավելի անհրաժեշտ են այն քաղաքների համար, որտեղ այս աշխատանքի համար օգտագործելու չեն գլխավորապես պահեստների հրամ. կազմը։ Հրահանգչական խորհրդակցությունների համար, որպես ղեկավար, հրավիրել տեղական զինվորական մասերից բարձր հրամանատարներին. իսկ որտեղ զինվորական մասեր չկան՝ տեղական զինվորական կոմիսարիատների ավելի պատրաստված աշխատակիցներին։



4. Պարապմունքներ տարվում են հատուկ նշանակված օրը։

5. Խիստ հետևել, որ պարապմունքներին ռազմական խմբակների բոլոր անդամները կանոնավոր հաճախեն։

6. Գավկոմները իրենց հաշվետվությունների մեջ հիշեն ծրագրի կիրառման ընթացքի մասին։

7. Չորս ամսյա ծրագրի կիրառումը պիտի վերջացնել, մինչև ապրիլի վերջը, այն խմբակները — որոնք նոր են կազմակերպված և ի վիճակի չեն այդ ժամանակամիջոցում այդ անելու, նրանց թույլատրվում է — ծրագրի առանձին պարապմունքները միացնել (օրինակ 1 և 2, 7 և 8) և կիրառումը վերջացնել ժամանակին։

**ՀԼԿՑԵՄ Կենտկոմի Ռազմֆիզշեֆ**

**Հանձնաժողով**

Այս ծրագիրը պետք կիրառվի 4 ամսվա ընթացքում, յուրաքանչյուր ամսում ունենալով 4 պարապմունք, համարելով ամեն մի պարապմունք 2 ժամ՝ ընդամենը 16 պարապմունք։

1-ին ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Երկրի պաշտպանությունը, ճակատի կախվածությունը թիկունքից։ Բանակի և թիկունքի փոխհարաբերությունները։ Տրանսպորտի խնդիրները։ Տրանսպորտի աշխատանքների կազմակերպումն պատերազմի պայմաններում։ Տնտեսական աշխատանքների խնդիրները խաղաղ ժամանակ՝ պատերազմի ժամանակի տնտեսական աշխատանքներին համապատասխան պայմաններ ստեղծելու համար։

Ձեռնարկներ.—1. Лебедев П. П. Потготовка страны к обороне.
2. Пугачев — Потготовка страны к обороне.
3. Клаус--Война и народное хозяйство.
4. Ранк—Инженеры и война.



2-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ժամանակակից կռվի բնույթը։ Փոքր խմբերի կռիվը՝ բանակում յեղած բոլոր մարտական և տեխնիքական միջոցների լիակատար փոխազդեցության ստեղծման պայմաններում։

Ձեռնարկներ—1. [redacted].—
2. Какурин — Современная тактика.
3. Боевой устав пехоты, ч. п.
4. РюлеФон-Лилиенштерн Боец и отд. пехоты, перевод Циффера.

3-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Դասակի մարտը պաշտպանության ժամանակ։

Պլակատի բացատրությունը, շեշտելով զորաշարժի և կրակի փոխհարաբերության կրակ կազմակերպելու մանրամասն բացատրությամբ, շաղկապելով այն առանձին մարտական միջոցների գործողության փոխազդեցության հետ։

Ձեռն. 1. Боевой Устав пехоты ч. п.
2. Плакат обороны взвода, изд. «Военн. Вестн.»

### 4-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գործնական ծանոթացում դասակի մարտական հրացանի գործածության հետ: Ցուցադրական կրակ թեթև և ծանր գնդացիրներից, գետնի և օդային նպատակների վրա:

Գործնական կրակ մարտական հրացանից, պառկած, ձեռքից, 100 մետրի վրա միշենի և № 6-ի վրա 5 կրակով:

### 5-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Դասակը հարձակման ժամանակ.

Պլակատի վրա պետք է բացատրել, թե դասակն ինչպես պետք է լուծի կոնկրետ խնդիրը, շեշտելով կրակի և հարվածի փոխհարաբերությունը և վորոշ կոպարի վրա կրակի կազմակերպումը, միաժամանակ պարզաբանելով տեխնիքական միջոցների փոխազդեցությունը:

Ձեռնարկներ—1. Боевой Устав пехоты, ч. п.

2. Плакат—изд. «Военн. Вестн.»

### 6-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ռազմական տեխնիկայի հաջողությունները մեզ մոտ, (կապ ավիացիայի), քիմիայի



զրահավորված մասերի, մոտորային տրանսպորտի): Ռազմական տեխնիկայի հաջողություններն արտասահմանում: Մեր խնդիրները յերկրի ինդուստրիացիայի և կենսական կենտրոնների պաշտպանման համար:

Ձեռնարկներ.—1. Шварте—«Техника в мировой войне».

2. «Военное искусство в свете исторического материализма», под редакцией Горева,

### 7-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Դասակը հետախուզության մեջ, պլակատի վրա կամ դասակի գործողության վայրում պիտի բացատրել մանրամասն կերպով հետախուզության գործողությունները:

Ձեռնարկներ—1. Боевой устав пехоты ч. п.

2. Плакат— изд «Военн. Вестн.»

### 8-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Դասակը պաշտպանողության ժամանակ.

պլակատի վրա պետք է բացատրել դասակի գործունեյությունը պաշտպանության ժամա-

նակ, կամ ցույց տալ գործողության վայրում։

Ձեռնարկներ—1. Боевой устав пехоты ч. п.

2. Плакат—изд «Военн. вестн»

## 9 րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գումարտակի հրետային դասակի խընդիրը պաշտպանության, պահպանության և հարձակման ժամանակ, գնդի հրետանու խնդիրները, դիվիզիայի հրետանու դերը։

Պլակատի վրա պետք է բացատրել հրետանային կռվի տարրերը և կռվի կազմակերպումը։

Ինչ-բան է հրետանային նախապատրաստությունը և ինչպես է նա կատարվում։

Ձեռնարկներ.—1. Боевой устав ч. II.

2. Плакат «артиллерия в бою».

3 Громыченко. Полковая артиллерия.

4. Пиказин. Что такое артиллерийская подготовка

5. ВНО—Боевая работа артиллерии.



6. Рюшен Что должен знать каждый к-р об артиллерии.

## 10-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Զրահապատ ուժեր, տանկեր, զրահապատ ավտոմոբիլներ, զրահապատ գնացքներ, զրահապատ դրեզիններ, զրահապատ ուժեր։ Հետևակազորի և զրահապատ ուժերի փոխհարաբերությունները։

Պլակատի վրա բացատրել զրահապատ մասերի տիպերը և նրանց հիմնական մարտական հատկությունները։

Բերել օրինակներ զրահապատ ուժերի և հետևակի փոխգործողության պատմությունից։

Ձեռնարկներ.—1. Боевой устав пехоты. ч. II.

2. Деревцев и Пушкин—Справочник по броневому делу.

3. Плакат броневых частей.

## 11-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ավիացիայի ներկա դրությունը, ավիացիայի կողմից կատարվող խնդիրները մար-

տի ժամանակ. նրա փոխազդեցութիւնը հետեւակազորի հետ մարտի ժամանակ: Բացատրել ավիացիայի գործունէութիւնը պլակատների վրա, թանգարանների եքըսպոնատների և կոնկրետ օրինակների միջոցով:

Ձեռնարկներ.—1. Боевой Устав пехоты ч. II.

2. В. Вельц—Воздушный флот. (Техника и тактика).

### 12-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Քիմիան, որպես մարտական միջոց: Քիմիական մարտական միջոցների ներկա դրութիւնը: Գազերից պաշտպանվելու անհատական և կոլլեկտիվ միջոցներ:

Ձեռնարկներ.—1. Боевой устав пехоты ч. II.

[redacted]

3. [redacted]



### 13-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Սակրավոր և քողարկման գործը:

Քողարկում և նրա նշանակութիւնը, խրամատ մարտիկի, ջոկի համար, ինչ բան է պաղաթապատարանը: Քողարկման միջոցներ և ձևեր:

Ձեռնարկներ.—1. Боевой устав пехоты ч. II.

2. Наставление по маскировке.

### 14. ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ձեռնառումբների գրանադամյոտների և մինոմյոտների գործածութիւնը: Գործնական ամրաձգութիւնները (ըստ ցանկութեան) գործնական կրակ «Նագան» ատըրճանակով 15 մետրի վրա № 5 մեշինով կանգնած, ձեռքից, 4 կրակով:

Ձեռնարկներ.—1. Временный Стрелковый Устав ч. I.

2. Ручные и ружейные гранады.

## 15-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

*Մարտ բնակավայրերի համար, բնակավայրերի պաշտպանության ծրագիրը: Փողոցային կռվի պրիոմներ: Կռիվ առանձին տներ գրավելու համար:*

*Ձեռնարկներ.*—1. Боевой Устав пехоты ч. II.

2. Какурин—Такт. отд. отряд в особых условиях обстановки.

3. Уличный бой сборник.

## 16-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

*Դաշտ դուրս գալը: Դասակի յերկկողմ ուսուցումը՝ (հարձակման և պաշտպանության) վոչ բարդ խնդիրների լուծման միջոցով:*

ՀՀ Ազգային գրադարան
NL0206937

40.745

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

355(07)
2-24

Ա. Մ. ԱՄԻՆԻԿՅԱՆԻ
Անվան